Աշխատավոր բոլոր յերկիրների, միացեք!

Ի. ԼՅՈՒԲԻՄՈՎ

ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

338.4
Լ-69

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ • ԵԵՐԵՎԱՆ • 1936

38.4
Ա-69
03 MAY 2013
17 FEB 2010

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

Ի. ԼՈՒԲԻՄՈՎ

ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Զեկուցում Համ Կ(բ)Կ կենտկոմի Պլենումում
1935 թ. դեկտեմբերի 21-ին

39052
06
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱԽՍՀ-ՀՍՍՀ

ՀԱՅԱՊԵՏՀՐԱՏ • ԵՐԵՎԱՆ • 1936

31.130

Й. ЛЮБИМОВ

ВОПРОСЫ ЛЕГКОЙ ПРОМЫШЛЕННОСТИ В СВЯЗИ СО СТАХАНОВСКИМ ДВИЖЕНИЕМ

Армпартиздат, Эривань

Ընկերնե՛ր, յերբ սեպտեմբերի սկզբին ընկ. Ստախանովի ռեկորդային արտադրանքի առաջին լուրերն ստացվեցին, մեզանից շատերը միանգամից չհասկացան այն հսկայական նշանակությունը, որ ունեցին ընկ. Ստախանովի այդ նվաճումները, և միայն հետո, յերբ Ստախանովի որինակով բարձր նորմաների և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար մղվող շարժումն արձագանք գտավ սկզբում հարյուրավոր, իսկ հետո հազարավոր բանվորների մոտ, պարզ դարձավ, որ դա յուրահատուկ շարժում է, որ դրան պետք է լծվեն բոլոր բանվորները, բոլոր տնտեսավարները:

Յեվ միայն ընկեր Ստալինը Ստախանովականների Առաջին խորհրդակցությանը

տվեց ստախանովյան շարժման ունեցած հսկայական նշանակության զարմանալի ճիշտ ու ցայտուն բնորոշումը,— արդյունաբերության մեջ հեղաշրջում և հեղափոխություն կատարելու նշանակությունը: Ընկեր Ստալինն այդ շարժումը բնորոշեց վորպես խոր հեղափոխական շարժում, վորը պատմության մեջ կմտնի վորպես մեր սոցիալիստական շինարարության փառապանծ եջերից մեկը, վորպես սոցիալիստական շինարարության նոր, բարձրագույն ետապ:

Ընկերներ Ստախանովի, Բուսիգինի, Սմետանինի, Կրիվոնոսի, Վինագրադովաների հետ պատմական բեմ դուրս յեկան նոր մարդիկ—բանվորներ և բանվորուհիներ,—և ստեղծեցին աշխատանքի նոր մեթոդներ, վորոնց հիման վրա մենք այժմ վերանայում և վերափոխում ենք մեր տնտեսական աշխատանքի բոլոր տեսակները՝ արդյունաբերության բոլոր ճյուղերում:

Մեր խնդիրը, արդյունաբերության տնտեսավար-ղեկավարների խնդիրը,— հենց

սկզբից հանդիսացել է—բոլոր միջոցները ձեռք առնել, վորպեսզի թեթև արդյունաբերության ճյուղերում այդ շարժումն ըստ հնարավորին ավելի լայն մասսաներ ընդգրկի, ինքներս լծվենք շարժմանը, իրագործենք այդ շարժման ղեկավարումը և այն ուղղենք համապատասխան, առավել ճիշտ հունով, վորպեսզի նա մեզ լավագույն արդյունքներ տա:

Մեզ մոտ, թեթև արդյունաբերության մեջ, մի անգամ չե, վոր քննարկվել է այն հարցը, թե ինչ նորմաներով աշխատել—տեխնիկական նորմաներով, թե՞ պլանային նորմաներով, և թե ի՞նչպես հաշվել պլանի կատարումը: Բազմիցս քննարկվել է այն հարցը, վոր մեզ մոտ վատ են ոգտագործվում մանածագործական դազդյահների ավտոմատները և մանածագործական ավտոմատիկ դազդյահները:

Իսկ այժմ ստախանովյան, վինագրադովյան շարժումը տեքստիլ արդյունաբերության մեջ վերացրել է ամեն տեսակի նման խոսակցությունները, վորովհետև

ստախանովականները հաղթահարեցին ներկայիս տեխնիկական նորմաները, հաղթահարեցին գոյություն ունեցող նախագծային կարողությունները: Այժմ մեկ բանվորն շատ ավելի մեծ թվով դազգյահներ է սպասարկում, քան մենք կարող էինք այդ յենթադրել, քան այդ կար մեր նախագծերում: Ըստ վորում հետաքրքրական է, վոր ներկայումս վոչ միայն խոսակցություն չկա այն մասին, թե ինչպես աշխատել ավտոմատիկ դազգյահների վրա, այլև բոլոր ավտոմատիկ դազգյահները և մանածագործական դազգյահների վրա յեղած բոլոր ավտոմատները— նույնիսկ նրանք, վորոնք բավարար չափով կատարելագործված չեն,— բավարար են աշխատում:

Մեր գեկավար տնտեսավարների մի մասը սկզբում ինչպես հարկն է չհասկացավ ստախանովյան շարժման խնդիրները, թերագնահատեց այն:

Յերբ սեպտեմբերի 28-ին յես մեր գեկավար տնտեսավարների առաջ հարց դրի, վոր մենք պետք է այնպես կատարենք

4-րդ յեռամսյակի պլանը, այնպես դերակատարենք նրա ծրագիրը, վորպեսզի տարեկան պլանի կատարման հնարավորություն ստեղծենք,— իսկ մենք մի շարք ճյուղերում, առանձնապես բամբակեղենի և վուշեղենի արդյունաբերության մեջ հետ եյինք մնում տարեկան պլանի կատարման գործում, մեզ հարկավոր եր 35—40 միլիոն ռուբլու լրացուցիչ ծրագիր վերցնել,— մեր գեկավար տնտեսավարները հանձն չառին այդ, առաջադրելով լրացուցիչ քանակի բանվորներ հավաքագրելու անհրաժեշտության պահանջը: Յեվ միայն հետո, յերբ յես դիմեցի նախ տրեստների կառավարիչներին և տնտեսավարների ակտիվին՝ դիրեկտորներին և ցեխերի պետերին,— այդ ծրագիրն ընդունվեց:

Մեր ստորին ակտիվը վերջ տվեց մեր գեկավար-տնտեսավարների մի մասի խոսակցություններին և ամեն տեսակ յենթադրություններին: Մենք չորրորդ յեռամսյակում կատարում ենք 50 միլիոն ռուբլու լրացուցիչ ծրագիր, վորը հաստատված է

կառավարության կողմից։ Ըստ վորում վոչ մի լրացուցիչ բանվորի կարիք չզգացվեց։ Մենք դրա շնորհիվ լրացուցիչ կերպով կտանք 25 միլիոն մետր բամբակեղեն գործվածք, 650 հազար մետր բրդեղեն գործվածք, կոշիկ, սպիտակեղեն, պարկեր և այլն։

Մեր մի շարք տնտեսավարներ դժվարությամբ եյին հասկանում ստախանովյան շարժման հսկայական նշանակությունը։ Այդ շարժմանը լծվելու, այդ շարժումը զլխավորելու, դրա ղեկավարությունն իրենց վրա վերցնելու գործում դժվարությամբ և դանդաղորեն շարժվեցին և այժմ էլ դեռ դժվարությամբ և դանդաղորեն են շարժվում մեր տնտեսավարներն ու ինժեներները։ Սակայն ղեկի ձեռնարկությունները կատարած այցելությունից հետո, վորտեղ գնալը մենք համառորեն ստիպում եյինք մեր ղեկավար տնտեսավարներին, յերբ նրանք տեսան ենտուզիազմի և արտադրական բարձր վերելքի այն տրամադրությունը,

վոր կա բանվորության մեջ, նրանք սկսեցին ավելի ճիշտ գնահատել այդ շարժումը։

Դեռ ստախանովականների մեր առաջին խորհրդակցության նախորյակին, վորը մենք կազմակերպեցինք հոկտեմբերի 14-ին մեր ստախանովական — վինոդրադովականների հետ, մի շարք ընկերներ հնարավոր չեյին համարում ստանձնել 1936 թվի նախագծումները, վորոնք մենք այն ժամանակ ուրվագրծել եյինք առանց աշխատանքային ուժը նշանակելիորեն ավելացնելու։ Իսկ մենք 1936 թվին պետք է կատարեյինք 7,531 միլիոն ռուբլու ծրագիր՝ 1935 թվի 5,700 միլիոն ռուբլու փոխարեն, այսինքն ծրագիրն ավելացնել մոտ 29,7%-ով։ Այդ ծրագիրը կատարելու համար, նախնական հաշվարկումներով, յեթե վերցնենք 1935 թվի աշխատանքի արտադրողականության նորման, մեր տնտեսավարները պահանջեցին մինչև 80 հազար հոգի լրացուցիչ բանվոր։

1935 թվին աշխատանքի արտադրողականությունը պլանով նախատեսված եր 3,8%։ Մենք այդ միջին պակաս կատարե-

ցինք։ Արդեն ստախանովյան շարժման սկզբի հաշվառումով կարելի է ձեր աշխատանքի արտադրողականությունը սահմանել 14%։ Այժմ մենք աշխատանքի արտադրողականությունը ուրվագծել ենք 21 տոկոս, հաշվառելով մասամբ այն, ինչը կարող է տալ մեզ ստախանովյան շարժումը, իսկ առաջին յեռամսյակի համար աշխատանքի արտադրողականություն վերցված է 26%։ Մոտավոր հաշվարկումներով մենք այս բանում տարվա ընթացքում կլինայենք մինչև 56 հազար բանվոր, այսինքն չենք վերցնի նոր բանվորներ, վորոնք հավաքագրելն առհասարակ դժվար է։ Սրանք են ստախանովյան շարժման առաջին եղրակի առաջին արդյունքները, նրա առաջին անդրադարձումը մեր գործնական աշխատանքի մեջ 1936 թվին։ Համբակեղենի մի շարք ձեռնարկություններ յերկհերթյա աշխատանքից կանցնեն յեռհերթյա աշխատանքի, չավելացնելով հմտական բանվորների քանակը։ Դրանք են — Մոսկվայի մարզի Դեդովի ֆաբրիկան, Իվանովի մարզի Նավոլոցյան, Սվերդլովի, Զերժինսկու անվան, «Կրասնայա Տալկա» ֆաբրիկաները և այլն։

Անկասկած, աշխատանքի արտադրողականության 21% պլանային թիվը, արդյունաբերության մեր ճյուղերում ստախանովյան շարժման հետագա զարգացման շնորհիվ, կգերակատարվի։

Ստախանովյան շարժումը մեզ հնարավորություն է տալիս ընդլայնել այնպիսի ճյուղերի արտադրությունը, ինչպես վուշեղենի արդյունաբերությունը, վորն զգալապես կծավալվի 1936 թվին՝ համեմատաբար քիչ քանակով լրացուցիչ բանվոր վերցնելով։

Ստախանովյան շարժումը բաց արեց մեր հնարավորությունները

Տեքստիլ և կոշկի արդյունաբերության մեջ մեր ձեռնարկություններն անցյալում ել աշխատանքի լավ նմուշներ են տվել։ Լենինգրադի «Սկորոխոդ» ֆաբրիկայում կար Զեվենկովսկու բրիգադը, որը հաշվվում եր իզոտովյան բրիգադ, այդ բրիգադում եր աշխատում և ընկ. Սմետանինը։

Ցեվդոկիա և Մարիա վինագրադովաները, մանածագործները, մինչև ապրիլ ամիս աշխատում եյին 50 դազդյահի վրա, հետո նրանք անցան 70 դազդյահի։

Սակայն մեր թեթև արդյունաբերության մեջ յեղած այդ համեմատաբար ռեկորդային արդյունքները բավարար չափով չեյին ժողովրդականացվել։ Դրանք չեյին դարձվել հասարակական մեծ նշանակություն ունեցող յերևույթ։ Ցեվ միայն Ստախանովն ու նրա նվաճումները լայնորեն ժողովրդականացվեցին և քաղաքական բարձր մակարդակի բարձրացվեցին սկզբում Դոնի կուսակցական կազմակերպության մեջ և Դոնի թերթերում, իսկ այնուհետև մեր կենտրոնական մամուլում, «Պրավդա»-յում, վորն արձագանք գտավ մեր լավագույն բանվորների մեծ մասի կողմից։

Դա մեզ հարկադրեց ավելի մեծ ուշադրություն դարձնել մեր առաջավորների վրա, նրանց աշխատանքը ժողովրդականացնել մեր «Լյոգկայա ինդուստրիա» թերթի միջոցով և կենտրոնական թերթերի միջոցով, վորպես աշխատանքի ստախանովյան մեթոդների համար մղվող պայքարի ու շարժման որինակ։

Այդ ժամանակվանից ստախանովյան շարժումն սկսեց որ-որի զարգանալ մեր թեթև արդյունաբերության մեջ։

Հոկտեմբերի 14-ին մենք հրավիրեցինք մեր ստախանովականների առաջին խորհրդակցությունը, վորին ներկա եյին տարբեր ճյուղերի 165 լավագույն բանվորներ ու բանվորուհիներ: Այդ խորհրդակցության պատվիրակությանն ընդունեցին ընկ. Մոլոտովը և ընկ. Անդրեյեվը, և այդ ընդունելությունը և այն ցուցմունքները, վորոնք տրվեցին ընկ. Մոլոտովի և ընկ. Անդրեյեվի կողմից, հսկայական խրախուսիչ նշանակություն ունեցան, վորովհետև կառավարության և կուսակցության պատասխանատու ղեկավարները դրանով իսկ հսկայական նշանակություն եյին տալիս սկսված շարժմանը: Նրանք դրույթներ սահմանեցին և աշխատանքի ուղղություն տվին:

Շարժումն առանձնապես ե՛լ ավելի ընդլայնվեց և խորացավ Ստախանովականների առաջին համամիութենական խորհրդակցությունից հետո, յերբ նրանից վերադարձած մեր հարյուրավոր աշխատողները, ե՛լ ավելի մեծ յեռանդով և ենտուզիազմով ըսկսեցին պայքարել ընկեր Ստալինի ցուցմունքների կենսագործման համար, առաջին խորհրդակցությանն արտասանած նրա ճառում դրված ցուցմունքներն իրագործելու համար:

Այդ շարժումն այժմ աստիճանաբար ընդլայնվում է:

Ամենից ավելի շատ զարգանում է կաշվեղենի-կոշկի, բամբակեղենի, բրդեղենի և տրիկոտաժ արդյունաբերությունը:

Ստախանովյան շարժումն ընդգրկել է և՛ այն բանվորներին, վորոնք առաջ չեյին կատարում ծրագիրը, և նրանց, ովքեր առաջ ծրագիրը կատարում եյին 80—90—95 տոկոսով, իսկ այժմ, մտնելով ստախանովյան շարժման ընդհանուր հորձանքի մեջ, առաջ են շարժվում և սկսում են կատարել ծրագիրը:

Շարժումը ծավալվեց գլխավորապես արդյունաբերության մի շարք ճյուղերի գլխավոր պրոֆեսիաների գծով և դեռ ամենավին վոչ բավարար չափով: Դեռ նշանակելի ռեզերվներ կան:

Մեր խնդիրն է 1936 թվի ընթացքում մի շարք հիմնական ճյուղերում ավելի ու ավելի շատ մասսաներ ներգրավել ստախանովյան շարժման մեջ։

Ի՞նչ արդյունքների յեն հասնում մեր ստախանովականները։ Ի՞նչ խնդիրներ են նրանք առաջադրում և պետք է առաջադրեն։

Առաջին և ամենագլխավորը, ինչը մեզ պիտի տա ստախանովյան շարժումը և ինչը թեթև արդյունաբերության աշխատողները պետք է իրենց համար խնդիր դնեն — դա սարքավորման լավագույն ոգտագործումն է, սարքավորման ոգտակար գործունեության գործակցի (коефициент) բարձրացումը և սարքավորման արտադրողականության բարձրացումն է։

Ստախանովականը — նոր, տեխնիկան իմացող մարդ է, և մենք պետք է ստախանովյան շարժման ոգնությամբ տեխնիկայից վերցնենք ամենայն հնարավորը, քամենք նրանից առավելագույնը։

Դա թեթև արդյունաբերության հիմնական և գլխավոր խնդիրն է։

Սարքավորման արտադրողականության բարձրացումը չպետք է կոծկվի և խառնվի այլ բաների հետ։ Սարքավորման արտադրողականության բարձրացումն առաջին հերթին պետք է կատարվի սարքավորների կրճատման հաշվին և մեքենաների արագությունը բարձրացնելու հաշվին։ Սարքավորումն ոգտագործելու հիման վրա մենք պետք է հասնենք աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելուն՝ աշխատանքային ժամանակը խտացնելու, բանվորների կողմից իրենց մեքենաները ճիշտ և ավելի լավ ոգտագործելու միջոցով։

Ի՞նչ ուղղություններով է գնում ստախանովյան շարժումն առանձին ճյուղերում։

Տեքստիլ ճյուղերում այդ շարժումն արտահայտվում է գլխավորապես մեկ բանվորի կողմից ավելի մեծ թվով դաղդյահներ ու մեքենաներ սպասարկելու մեջ, առանձնապես ջուլհակության և մանելու գործում, այսպես կոչված խտացած աշխատանքի անց-

1009
39052
ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА
ՀՍՍՀ-CCPA
Գ. Ա. Մասիկյան

նելու և հիմնական վորակյալ բանվորներին (ջուլհակներին, մանողներին և այլն) ոժանդակ աշխատանքից ազատելու մեջ։

Կաշվեղենի–կոշկի արդյունաբերության մեջ ստախանովյան շարժումը, ընկ. Սմետանինի որինակով, զարգացավ դլխավորապես ձեռքի բարձրորակ աշխատանքներում — աշխատանքային ժամանակը ռացիոնալ բաշխելու, աշխատանքի տեղը լավ կազմակերպելու, աշխատանքի յեղանակն ու շարժումները փոփոխելու և աշխատաժամանակն առավելագույն կերպով խտացնելու հաշվին։

Կոնվեյերային սիստեմում, վորը լայնորեն տարածված է կոշկի արդյունաբերության մեջ — դա կոնվեյերի արագացումն է և աշխատանքի լավագույն կազմակերպումը։

Ապակու արդյունաբերության մեջ, վորտեղ ավելի ու ավելի յե բարձրանում մեքենայացված արտադրության տեսակարար կշիռը, աշխատանքի նոր մեթոդներն արտահայտվում են բրիգադի աշխատանքի վերակառուցման, վորակյալ կադրի ավելի լրիվ ոգտագործման, աշխատատեղի ավելի լավ

կազմակերպման, բրիգադի աշխատանքի տեմպի արագացման և վորակյալ բանվորներին անվորակ ու ոժանդակ աշխատանքից ազատելու մեջ։

Մեր ստախանովականները, արդյունաբերության հիմնական ճյուղերում, մասնավորապես հայտնի առաջավոր ստախանովականները, բարձր նորմաների հասան ինչպես դազդյահներին ու մեքենաներին սպասարկելու գործում, այնպես ել աշխատանքի արտադրողականության մեջ։ Վինադրադովան, վորն ապրիլին աշխատում եր 70 դազդյահի վրա, ներկայումս աշխատում է 216 դազդյահի վրա։ «Հոլշևիկ» ֆաբրիկայում Ոդինցովան աշխատում է 216 դազդյահի վրա։ Դրանք ավտոմատիկ դազդյահներ են։ Տրյոխգորնի մանուֆակտուրայի ջուլհակ Ֆադեյեվան 8–ի փոխարեն աշխատում է 16 հասարակ պլատովյան դազդյահի վրա։

Մեկ բանվորի կամ մեկ բանվորուհու կողմից ավելի շատ մեքենաների սպասարկման անցնելը տեղի յե ունենում և մանելու գործում։ Իվանովոյում Ջերժինսկու անվան

ֆաբրիկայում մանող Ենեգիրեվան չորս շրջակողմի փոխարեն, վորոնց վրա նա առաջ աշխատում եր, ներկայումս աշխատում է մանելու 16 շրջակողմի վրա և սպասարկում է 4 հազար ճախարակ։ Կունցեվի ֆաբրիկայի ջուլհակ Զեկունովան յերկու դազգահի փոխարեն սպասարկում է 8 դազգահ։ Սվոբոդնի պրոլետարիատի» ֆաբրիկայից ջուլհակ Կորոլեվան 2-ի փոխարեն սպասարկում է 4 ծանր Բրեզենտի դազգահ։

Կոշկի արդյունաբերության մեջ ընկ. Սմետանինը 680 զույգի փոխարեն ներկայումս մշակում է 2200 զույգ։

Նույն դրությունն է ապակու արդյունաբերության մեջ, վորտեղ մի ժամում 35 մետրի փոխարեն տալիս են 55 մետր և նույնիսկ 60 մետր բեմյան ապակի։

Այդ առաջավոր — ստախանովականները մեզ ցույց են տալիս, թե ինչպես իշիք են դառնում առաջուց սահմանված նորմաները, մասնավորապես մեքենայի և դազգահի մի ժամվա արտադրանքի վերաբերյալ։ Յեթե առաջ Նոգինի անվան ֆաբրիկայում դազգահը մեկ ժամում տալիս եր 3,09 մետր, ապա այժմ ստախանովական—վինագրադովականներն արտադրում են 3,79 մետր։ «Պրոֆինտերն» ֆաբրիկայում 3,82 մետրի դիտադոնալի փոխարեն այժմ մի ժամում արտադրում են 4,4 մետր։

Խտացման նորմաները, վորոնք այժմ ընդհանուրի կողմից ընդունված են համարվում և վորոնք դրված են 1936 թ. աշխատանքի հիմքում, սրանք են,—Յեթե նեղ միթիալի գծով հասարակ, վոչ-ավտոմատիկ դազգյահների դեպքում առաջին կիսամյակում բանվորուհին աշխատում եր 4-6 դազգյահի վրա, ապա չորրորդ յեռամսյակում աշխատում է 6 դազգյահի վրա, իսկ 1936 թվին կաշխատի 6-8 դազգյահի վրա։ Նեղ կտավի գծով յեթե առաջին յեռամսյակում աշխատում եր 3-4 դազգյահի վրա, ապա 4-րդ յեռամսյակում 4, իսկ 1936 թվին—5 դազգյահի վրա։ Իսկ ավտոմատների գծով առաջին կիսամյակի 36 դազգյահ նորմայի փոխարեն, 4-րդ յեռամսյակում աշխատում է 60 դազգյահի վրա և, ըստ յերևույթին,

մենք նորման կհասցնենք 60–100 դազդյահի, նայած ասորտիմենտին։

Նույնն է կատարվում Վուշեղենի և Մետաքսեղենի արդյունաբերության մեջ, որտեղ բանվորուհին մեկ դազդյահից անցնում է 2–3 դազդյահի, մեկ մանող շրջակողմից անցնում է 2–3 յերեսի։

Մի շարք ցուցանիշներով մեր ստանձին կին ստախանովական – վինագրադովական ջուլհակներն ու մանողները հասել են ամերիկյան լավագույն ցուցանիշներին հավասար նորմաների։

Խտացրած աշխատանքի դեպքում ավտոմատիկ դազդյահների վրա կին ջուլհակը մենակ չի աշխատում։ Վինագրադովանները և Ոգինցովան ժանդակ աշխատողներ ունեն։

Ոգինցովան 4 յենթավարպետ, 4 լցանք կատարող և 3 կապող ունի կամ թե 12 հոգի սպասարկող անձնակազմ, այսինքն յուրաքանչյուր աշխատողին 17–18 դազդյահ։ Ամերիկայում խտացրած աշխատանքում

յուրաքանչյուր բանվորին մոտավորապես նույն քանակի դազդյահ է ընկնում։

Միխնեվում «Ոկտյաբրսկայա ռեվալյուցիա» ֆաբրիկայում կին ջուլհակ Իլարիոնովան աշխատում է 210 դազդյահի վրա, յուրաքանչյուր բանվորուհուն (կոմպլեկտի մեջ 11 հոգի յեն) միջին հաշվով ընկնում է 19 դազդյահ։

Մեծ քանակությամբ մեքենա սպասարկելու ժամանակ մենք դնում ենք մի կարևոր և պարտադիր խնդիր,—սարքավորման ոգտակար գործողության գործակցի անպայման մեծացումը։ Մեր մի շարք լավագույն բանվորուհիներն այդ արդյունքներին հասնում են։ Վինագրադովան աշխատելով 70 դազդյահի վրա սարքավորման ոգտակար գործողության 0,87 գործակից եր տալիս, այժմ նա հասնում է 0,90—0,93-ի։ Ոգինցովան աշխատելով 36 դազդյահի վրա, սարքավորման ոգտակար գործողության 0, 89 գործակից ուներ, այժմ 0, 93 և այլն։

Սակայն կան մի շարք յերևույթներ և

խեղաթյուրումներ, վորոնք բավականին լայն տարածվեցին առանձնապես առաջին շրջանում, յերբ մեծ քանակությամբ դազդյահ ու մեքենա սպասարկելուն անցնելու կապակցությամբ սարքավորման ոգտակար գործողության գործակիցն իջնում եր, այսինքն սարքավորման արտադրողականությունն ընկնում եր։ Այդ մեծ քանակությամբ տեղի ունի առանձնապես վուշեղենի և մետաքսեղենի արդյունաբերության մեջ։

Մի շարք ձեռնարկություններ ուղղակի խախտեցին տարրական պայմանները՝ աշխատանքի ստախանովյան մեթոդներին անցնելիս,—այսպես, Գուս-Խրուստալում բամբակեղենի ֆաբրիկայում խտացրած աշխատանքի անցնելիս ֆաբրիկայի ղեկավարությունը գիտակցաբար իջեցրեց արտադրանքի նորմաները։ Սկզբում նույնը կատարվեց Լենինգրադի «Ռաբոչիյ» ֆաբրիկայում։

Նման յերևույթների հետ անհրաժեշտ է վճռաբար պայքարել և անմիջականորեն ուղղել։

Այն նորմաները վորոնց այժմ հասան մեր

լավագույն ստախանովյան-վինագրադովյան—սմետանինականները, շուտ տվին այն բոլորը, ինչը գրված եր դասագրքերում, տեղեկատուներում և նորմաների մասին յեղած բոլոր վորոշումներում։

Մեր խնդիրն է անպայման, վորքան հնարավոր է շուտ դեն նետել այդ նորմաները, վերանայել դրանք՝ հավասարվելով լավագույն ստախանովականների նորմաներին։

Ընկեր Ստալինը փայլուն ցուցումներ տրվեց ճակնդեղի հինգհարյուրականների որինակով նորմաներ սահմանելու մասին։ Մեզ մոտ վոչ բոլոր բանվորները կարող են աշխատել այնպես, ինչպես աշխատում է Սմետանինը։ Բոլորը չեն կարող աշխատել այնպես, ինչպես աշխատում են Վինագրադովները—216 դազդյահի վրա. սակայն 30–40 ավտոմատիկ դազդյահի նորման անպայման քիչ է։ Կարելի յե վերցնել շատ ավելի մեծ նորմա և մեր լավագույն առաջավորները վերցնում ու շատ լավ սպասարկում են 60—100 դազդյահ։ Մենք արդեն մի ամբողջ շարք ձեռնարկություններ ունենք, վորտեղ

աշխատում են այդքան դաժդյահի վրա, այդպես են Մոսկվայի մարզի Դեդովկա ձեռնարկությունները, Կալինինի մարզի Վորոշիլովի անվան ֆաբրիկան և այլն:

Ստախանովյան շարժումը և ստախանովականները պետք է իրենց համար խնդիր դնեն վոչ միայն ավելացնել աշխատանքի ու սարքավորման արտադրողականությունը, այլև լավորակ արտադրանք տալ: Մեծ մասամբ մեր առաջավորները հասնում են և այդ արդյունքներին:

ՆՈՐ ԶԵՎՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ինչ բանի չնորհիվ են ձեռք բերվում մեր առաջավորների այդ հաջողությունները, այդ բարձր նորմաները, վոր նրանք այժմ կատարում են:

Մեր ստախանովականները—դրանք ամենից առաջ նոր մարդիկ են, առանձնահատուկ մարդիկ: Դրանք նոր կադրեր, ստալինյան, կադրեր են, տեխնիկան յուրացրած մարդիկ, վորոնք մեծ մասամբ անց են կացել տեխմինիմումից և «գերազանց» են տվել պետտեխքննությունները:

Մեր մի շարք ճյուղերում բանվորները բավականին լայնորեն ընդգրկվել են տեխ-

մինիմումով: Իմ մոտ յեղած տվյալներով զանազան ճյուղերում 200 հազար բանվոր անցել են տեխմինիմումը և 136 հազար բանվոր տվել են պետտեխնություն:

Մեր առաջ հսկայական խնդիր կա դրված,— ե՛լ ավելի ընդլայնել տեխմինիմում անցնող բանվորների շրջանը, ըստ վորում տեխմինիմումի ծրագիրն, ինչպես արված ե ծանր արդյունաբերության մեջ, անհրաժեշտ ե անպայման բարձրացնել: Նա անբավարար ե և այդ արդեն զգում են մեր բանվորները: Իրենք բանվորները մատնանշում են այդ դրությունը:

Մեր սխատանովականների լավ աշխատանքը վորոշվում ե նաև նրանով, վոր այդ մարդիկ լավ են իմանում տեխնիկան: Ընկ. Սմետանինն ինձ հետ խոսելիս ասում եր,— «լավ աշխատելու համար պետք ե լավ իմանալ մեքենան, պետք ե զգալ, թե ինչով ե շնչում մեքենան»: Ցեվ սմետանինականները, աշխատելով մեքենաների վրա, զգում են նրա ամեն մի սխալ թիկոցը, յուրաքանչյուր սխալ հարվածը:

Վինագրադովանների և մյուսների լավ աշխատանքը ձեռք ե բերվում նրանով, վոր նրանք հիանալի ճանաչում են դազգյահները,— դազգյահները շուրջանցելով նրանք զգում են, թե ինչու այս կամ մյուս դազգյահն անկանոն ե աշխատում: Դազգյահին առաջին ոգնությունը նրանք ցույց են տալիս հենց տեղում իրենք կամ անմիջապես վորոշում են, թե հատկապես վորտեղ ե կոտրվածքը, վորտեղ ե անճիշտ աշխատում դազգյահը և ազդանշանում են յենթավարպետին, մատնանշելով այն կոնկրետ տեղամասերը, վորոնք ուղղվելու կարիք են զգում:

Ստախանովականները, բացի դրանից, դեռևս ամենակարող, ամենաճարպիկ և ամենաճարտար աշխատողներն են: Ջուլհակների համար, յերբ թելը կտրվում ե, հանգուցելու համար սահմանված ե 5—6 վայրկյան, իսկ նրանք կապում են 1—2 վայրկյանում: Մաղոգը փոխելու համար սահմանված ե 5—6 վայրկյան, իսկ նրանք այդ անում են 2—4 վայրկյանում:

Նույն դրությունն է նաև կաշվեղենի-կոշկի արդյունաբերության մեջ։ Մի հիմնական ոպերացիայի համար առաջ պահանջվում էր՝ հիմնական աշխատանքի համար 10 վայրկյան իսկ ոժանդակ աշխատանքի համար՝ 27 վայրկյան։ Սմետանինը ռացիոնալացման միջոցով, վոր նա կիրառել է իր աշխատանքում, հասել է այն բանին, վոր նա հիմնական աշխատանքը կատարում է 10 վայրկյանում, իսկ ոժանդակը 27 վայրկյանի փոխարեն կատարում է միայն 3—4 վայրկյանում։

Մեր ստախանովականների՝ աշխատանքում կուտակած ունակությունները, տեխնիկայի ուսումնասիրումը, նրանց տեխնիկական և հանրակրթական մակարդակի բարձրացումը, քաղաքական ուսուցումը և մեր կուսակցության աշխատանքն առաջավոր-ստախանովականների, կուսակցության անդամների և վոչ-կուսակցական բոլշևիկների հսկայական մասսաներ են պատրաստել մեր արդյունաբերության ստորին շերտերում։

Անհրաժեշտ է նշել և մի շարք այլ պայմաններ, վորոնք ոժանդակում են մեր ձեռնարկությունների և մեր ստախանովականների լավագույն աշխատանքին։

Թեթև արդյունաբերությունը, սկսած 2-րդ յեռամսյակից, հումքային ռեսուրսների նշանակելի բարելավում ունի, առանձնապես բամբակեղենի արդյունաբերության մեջ, ավելի լավ հումք, բամբակի ավելի լավ մշակում նախապատրաստական բաժիններում, տեխնոլոգիական պրոցեսի ավելի լավ կարգավորում ունի։ Որինակ, սկսել են բամբակն ավելի լավ խոնավացնել, սկսել են այն թրջել նավթային մնացորդների խառնուրդից կազմված հատուկ եմուլսիայով, վորը շատ է ամրացնում ու պնդացնում թելը, վորը մանելու ու գործելու ժամանակ ավելի քիչ է կտրվում։ Վորոշ չափով ավելի լավացել է սարքավորման կարգավորումը, դետալների և ոժանդակ նյութերի մատակարարումը։ Սակայն թեթև արդյունաբերության մեջ դետալների, պահեստի մասերի և ոժան-

դակ նյութերի մատակարարման գործում դեռևս շատ ու շատ թերություններ կան, վորոնք պետք է վերացնել 1936 թվին:

Ստախանովյան շարժումը և ստախանովականները ստիպում են վերակառուցել մեր ամբողջ աշխատանքը ձեռնարկություններում գործի ամբողջ կազմակերպումը մեր ֆաբրիկաներում և գործարաններում: Նրանք տնտեսական ամբողջ ղեկավարությունը սկսած դիրեկտորից և վերջացրած դլխավոր ինժեներով և յենթավարպետով, ստիպում են նոր ձևով, ավելի կոնկրետ, գործնական, մեծ ուշադրությամբ և ոպերատիվությամբ մոտենալ գործին: Ստախանովականները, վինագրադովականները և սմետանինականները ձեռնամուխ չեն լինում աշխատանքին մինչև վոր չստուգեն, կարգի՞ն է սարքավորումը: Հարկ յեղած դեպքում նրանք վարպետին կամ յենթավարպետին ստիպում են իրենց հետ ստուդել սարքավորումը, և միայն դրանից հետո յեն անցնում աշխատանքի: Սկսել են սարքավորումը շատ ավելի շատ կարգի

բերել, աշխատատեղին բարելավված, ավելի կուլտուրական ե դարձել:

Այժմ մեր ձեռնարկություններում ստախանովականները ինժեներա-տեխնիկական աշխատողների առաջ բազմաթիվ հարցեր են դնում ձեռնարկության աշխատանքը բարելավելու մասին, սարքավորման այս կամ այն տեսակը բարելավելու մասին, ձեռնարկություններում յեղած մեծ թվով անկանոնությունները վերացնելու մասին, մեքենայի այս կամ այն մասի կամ դետալի փոփոխման մասին:

Ահա մի շարք դեպքեր...

Պոստիշև.— Ընկ. Լյուբիմով, ներեցեք, յես մի հարց ունեմ: Խնդրեմ ասացեք, դուք ասում եք, վոր Սմետանինը դազդյահի դլուխ չի անցնի, մինչև վոր չհամոզվի, վոր դազդյահը պատրաստ ե, և մինչև վոր վարպետը չնայի: Իսկ յեթե բոլորը դառնան ստախանովական և սպասեն, մինչև վոր վարպետը նայի բոլոր դազդյահները, ինչպե՞ս կստացվի:

Լյուբիմով.— Մեր բոլոր ձեռնարկու-

թյունների խնդիրն է ամբողջ սարքավորումը մշտական կարգին պահել։ Վո՛չ միայն Սմետանինի ու Վինագրադովների սարքավորումը,— վո՛չ միայն տասնյակ ու հարյուրավոր Սմետանինների ու Վինագրադովների սարքավորումը, այլ ամբողջ սարքավորումը պահել կարգին։ Այդ սմետանինականների և ստախանովականների հրամայական ծառայությունն է, որ նրանք բոլորը պահանջում են և հասնում են այն բանին, որպեսզի սարքավորումը կարգին պահեն։

Մոլոտով,— Լավ է, որ պահանջում են։

Լյուբիմով,—Հենց վերջին որերս ինձ մի շարք դեպքեր են պատմել տնտեսավարների և բանվոր-ստախանովականների հետ խորհրդակցության ժամանակ։

Ահա, որինակ, վուշի նախնական մշակման չվինգտուրբինին կից փոքրիկ ոեղանի կառուցումը նշանակելի չափով բարձրացրեց մեքենայի արտադրողականությունը։ Դա նշանակելի չափով բարձրացրեց չվինգտուրբինի արտադրանքը— միչև 50 % և

ավելացրեց յերկար թելի քանակը։ Հյուսվածքի մեջ վոլորված թելից յերիզներ բաց թողնելը «Բոլշևիկ» ֆաբրիկայում նշանակելի չափով կրճատում է կտրտվելը։ Կրասնոխոլմի ֆաբրիկայում վարպետ Ալեքսանդրովը յուրահատուկ կեռիկ է կառուցել, վորը չի կոտրվում և լավ է աշխատում։ Այնուհետև, որինակ, վորոշ տեղերում յենթավարպետի գործիքների պահարան ունենալն արդեն խոշոր դեր է խաղում, վորովհետև վարպետը չի վազվզում, նա տեսնում է, թե ինքն ինչ ունի, գործիքները դասավորված են դարակներում։ Այդ անում են և «Ոկտյաբրսկայա ռեվոլյուցիա» ֆաբրիկայում։ Դեդովի ֆաբրիկայում մտցրել են հաճախ գործածվող գործիքների և դետալների արկղ, վորպեսզի վարպետը ման գա այդ արկղով։

Այս փաստերը ստախանովյան շարժման հետևանքն են։

Ընկերներն ինձ պատմեցին Գոմելի գործարանի մասին, թե ինչպես է այնտեղ բեռնաթափվում տորֆը։ Այժմ եստակադա

թյունների խնդիրն է ամբողջ սարքավորումը մշտական կարգին պահել։ Վո՛չ միայն Սմետանինի ու Վինագրադովների սարքավորումը,— վո՛չ միայն տասնյակ ու հարյուրավոր Սմետանինների ու Վինագրադովների սարքավորումը, այլ ամբողջ սարքավորումը պահել կարգին։ Այդ սմետանինականների և ստախանովականների հրամայական ծառայությունն է, որ նրանք բոլորը պահանջում են և հասնում են այն բանին, որպեսզի սարքավորումը կարգին պահեն։

Մոլոտով,— Լավ է, որ պահանջում են։

Լյուբիմով,—Հենց վերջին որերս ինձ մի շարք դեպքեր են պատմել տնտեսավարների և բանվոր-ստախանովականների հետ խորհրդակցության ժամանակ։

Ահա, որինակ, վուշի նախնական մշակման չվինգտուրբինին կից փոքրիկ ոեղանի կառուցումը նշանակելի չափով բարձրացրեց մեքենայի արտադրողականությունը։ Դա նշանակելի չափով բարձրացրեց չվինգտուրբինի արտադրանքը— մինչև 50 % և

ավելացրեց յերկար թելի քանակը։ Հյուսվածքի մեջ վոլորված թելից յերիզներ բաց թողնելը «Բոլշևիկ» ֆաբրիկայում նշանակելի չափով կրճատում է կտրտվելը։ Կրասնոխոլմի ֆաբրիկայում վարպետ Ալեքսանդրովը յուրահատուկ կեռիկ է կառուցել, վորը չի կոտրվում և լավ է աշխատում։ Այնուհետև, որինակ, վորոշ տեղերում յենթավարպետի գործիքների պահարան ունենալն արդեն խոշոր դեր է խաղում, վորովհետև վարպետը չի վազվզում, նա տեսնում է, թե ինքն ինչ ունի, գործիքները դասավորված են դարակներում։ Այդ անում են և «Ոկտյաբրսկայա ռեվոլյուցիա» ֆաբրիկայում։ Դեղովի ֆաբրիկայում մոցրել են հաճախ գործածվող գործիքների և դետալների արկղ, վորպեսզի վարպետը ման դա այդ արկղով։

Այս փաստերը ստախանովյան շարժման հետևանքն են։

Ընկերներն ինձ պատմեցին Գոմելի գործարանի մասին, թե ինչպես է այնտեղ բեռնաթափվում տորֆը։ Այժմ եստակադա

յեն պատրաստել, վագոնները դալիս են նրա վրա. վագոնի հատակը յերկու կողմի վրա թեք է պատրաստված և յերբ մեկ ու մյուս կողմից վագոնի դռները բացվում են տորֆը հեշտությամբ թափվում է: Դա հնարավորություն է տվել բեռնող-բեռնաթափող բանվորների թիվը 500-ից հասցնել 250-ի:

Սա նույնպես ստախանովյան շարժման արդյունքն է:

Չկա վո՛չ մի պրոցես, վո՛չ մի մանրունք, ինչպես այդ պարզվում է ստախանովականների հետ ունեցած անմիջական զրույցներից, վորի վրա նրանք ուշադրություն չդարձնեն, բարելավում չպահանջեն:

Վորպեսզի մեզ մոտ առավել հաջողությամբ զարգանա ստախանովյան շարժումը, անհրաժեշտ է վերացնել մեր աշխատանքում յեղած մի շարք խոչորագույն բացերը:

Մեզ մոտ, ինչպես թերևս և վոչ մի այլ ճյուղում, հին նորմաներն ու տրադիցիաները, կոնսերվատիզմը բավականին ուժեղ

են: Այդ կոնսերվատիզմը և այդ տրադիցիաները պետք է ջախջախել:

Մեզ մոտ մի շարք ձեռնարկություններ տեխնիկապես հետամնաց են, վերակառուցման ու վերանորոգման կարիք են զգում:

Ստախանովյան շարժումը թեթև արդյունաբերության մեջ իր ժամանակին չի հասկացվել ու գնահատվել ինչպես տնտեսավարների, այնպես էլ ինժեներա-տեխնիկական աշխատողների կողմից: Ինժեներա-տեխնիկական աշխատողների նշանակելի մասն այժմ էլ չի հասկանում ստախանովյան շարժումը: Մարդը տեսնում է, վոր բանվորն աշխատում է մեծ քանակությամբ դաղդյահների ու մեքենաների վրա, աշխատանքի մեծ արտադրողականություն է տալիս, սակայն վոչ մի կերպ չի կարողանում մարսել այդ, վոչ մի կերպ չի կարող հասկանալ այդ: Սկզբնական շրջանում ձեռնարկություններում, հետամնաց բանվորների շրջանում վորոշ տրամադրություններ կային ստախանովյան շարժման դեմ: Այժմ

դա վերանում է և մեր ձեռնարկություններում բանվորների շրջանում տիրող տրամադրությունը— դա վերելքի տրամադրություն է, իր աշխատանքը բարելավելու, աշխատանքի արտադրողականությունը և աշխատավարձը բարձրացնելու տրամադրություն է:

Մեր շատ ձեռնարկություններում տնտեսավարները և ինժեներա-տեխնիկական աշխատողները վո՛չ միայն շարժումը չգլխավորեցին, այլև իսկական ոգնություն ցույց չտվին նրան, նախապատրաստական աշխատանք չկատարեցին, չապահովեցին մեր ստախանովականների աշխատանքը: Սակայն տնտեսավարների ու ինժեներա-տեխնիկական աշխատողների զգալի մասը լծվեց և լծվում է այդ աշխատանքին:

Մենք հարկադրվեցինք կիրառել մի շարք ռեպրեսիվ միջոցառումներ բավականին մեծ թվով մեր տնտեսավարների, ձեռնարկությունների դիրեկտորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների նկատմամբ: Այսպես, «Կոմունիստիչեսկի ավանգարդ»

ֆաբրիկայում հանդիմանություն արվեց դիրեկտոր Անդրիանովին և գործվածքային ցեխի պետին, վուշեղենի ֆաբրիկայի դիրեկտոր Կաշինցևին և գլխավոր ինժեներ Մարտինովին նախազգուշացվեց, վոր նրանք պաշտոնից կհանվեն, «Բոլշևիչկա» ֆաբրիկայի դիրեկտորը հանված է աշխատանքից: Մի շարք դիրեկտորներ և ինժեներա-տեխնիկական աշխատողներ հանված են անուշադրության, անհոգության և յերբեմն ել ստախանովյան շարժման ծավալման նկատմամբ հանցագործ վերաբերմունքի համար:

Ցեռ այստեղ չեմ կարող չնշել մեր մի շարք լավ դիրեկտորներին, վորոնք իրենց աշխատանքով նպաստել են այն բանին, վոր նրաց ձեռնարկությունները բարձրանան աշխատանքի ավելի բարձր աստիճանի: Հենց այդ ձեռնարկություններում են առաջ քաշվել լավագույն ստախանովականները:

Դրանք են—ընկ. Պանովը— Նոգինի անվան ֆաբրիկայում, վորտեղ աշխատում

են Մարիա և Յեվդոկիա Վինագրադովանները, ընկ. Լուկինը— Դեդովի ֆաբրիկայում, ընկ. Բարանովը— «Բոլշևիկ» կոմբինատում, վորտեղ աշխատում է Ոդինցովան, ընկ. Ժդանովիչը— Ֆրունզեյի անվան ֆաբրիկայի դիրեկտորը:

Բրդեղենի արդյունաբերության ասպարեզում մի շարք դիրեկտորներ— ընկ. ընկ. Ադրոսկինը, Խազանը, Յեվսեյեվը, մեծ աշխատանք են կատարում ստախանովյան շարժումը ծավալելու գործում:

Կաշվեղենի-կոշկի արդյունաբերության ասպարեզում «Սկորոխոդ» ֆաբրիկայի դիրեկտոր ընկ. Բոբրովը, «Պարիժսկայա կոմունա» ֆաբրիկայի դիրեկտոր ընկ. Կարասիկը:

Ապակու արդյունաբերության գծով ընկ. Գոլանտը, ընկ. Դոցենկոն:

Կան հիանալի ինժեներներ, վորոնք ակտիվորեն ոգնում են շարժմանը, ինչպես ընկ. Սպորիչևը Նոգինի անվան ֆաբրիկայում, վորտեղ աշխատում են Վինագրադովները, ընկ. Մագիդը—«Սկորոխոդ»

ֆաբրիկայում, ընկ. Գորնոստայեվը—Կրասնոխոլմի ֆաբրիկայում, ընկ. Յերոֆեյեվը— Կունցեվի ֆաբրիկայում, ընկ. Ռիկունովը— «Ոկտյաբրսկայա ռեվոլյուցիա» ֆաբրիկայում, վորտեղ աշխատում է Իլարիոնովան, ընկերներ Նեմիրոն, Լոգինովը, Կորժինը և մի շարք ուրիշներ, ինչպես նաև յենթավարպետներից Լեպիլովը, Մեֆոդիյեվը «Ոկտյաբրսկայա ռեվոլյուցիա» ֆաբրիկայից:

Բոլորի անունը տալ հնարավոր չէ, ասենք, կարիք էլ չկա: Յես դրանց անունը տալիս եմ սոսկ նրա համար, վորպեսզի նշեմ, վոր կան հիանալի ինժեներա-տեխնիկական աշխատողներ, վորոնք լծվում ու ղեկավարում են այդ շարժումը:

Ընկեր Ստալինը Ստախանովականների առաջին խորհրդակցության արտասանած իր ճառում ասաց, վոր ստախանովյան շարժումն անպայման կապված է նոր տեխնիկայի հետ: Ստախանովյան շարժումն անհնարին է առանց նոր, բարձր տեխնիկայի:

Մեր ձեռնարկությունների մեծ մասը բավականին հին ձեռնարկություններ են։ Սակայն մի շարք ձեռնարկություններ կառուցված են և կառուցվում են նոր տեխնիկայի հիման վրա, նրանցում նոր սարքավորում և նոր տեխնոլոգիկ պրոցեսներ են մտցված։ Ներկայումս մի շարք հին ձեռնարկություններ վերակառուցվում են, համալրվում են նոր սարքավորումով, հին սարքավորման վրա մի շարք նոր գործիքներ են ամրացվում՝ արտադրությունն ավտոմատացնելու և մեքենայացնելու համար։

Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյում թեթև արդյունաբերության մասին ժողկոմատի տված զեկուցումից հետո, վորը դրված էր ընկեր Ստալինի նախաձեռնությամբ, 1936 թվին կատարելու համար, մշակվել ու նշվել են նշանակելի միջոցառումներ՝ հին ձեռնարկությունները վերակառուցելու, սարքավորումը մեքենայացնելու ու ավտոմատացնելու և սարքավորման նոր տեսակները յուրացնելու գծով։

Մեր գեկավար աշխատողների ուղևորությունները 1934 և 1935 թ. թ. դեպի արտասահման մեզ հնարավորություն տվին ավելի լայնորեն ծանոթանալու արտասահմանյան տեխնիկայի հետ և այն ավելի լայնորեն կիրառելու։ Բոլոր ճյուղերի գծով մենք մի շարք նոր սարքավորումներ կըստանանք, վորոնք արագացնում են արտադրության պրոցեսը և բարելավում են արտադրանքի վորակը։

Ծանր արդյունաբերության ժողկոմատի խորհրդային մեքենաշինությունը թեթև արդյունաբերության համար արդեն յուրացրել է սարքավորման մեծ քանակությամբ (մոտ 200) նոր տեսակներ։ 1936 թվին նախատեսվում է յուրացնել սարքավորման մոտ 40—50 նոր տեսակներ։ Դա մեզ հնարավորություն է ընձեռում վերակառուցելու մեր արդյունաբերությունը, ձեռնարկությունների համար նոր, ավելի կատարելագործված մեքենաներ ու դազդյահներ ստանալու։

Այժմ մեր աշխատանքում և ստախանո-

վյան շարժումը ծավալելու աշխատանքում հիմնական թերություններից մեկը— դա թեթև արդյունաբերության աշխատավարձի սիստեմի խոչընդոտն թերությունն է: Պետք է անպայման վերացվի այսպես կոչված վարձատրման պրոդրեսիվ սիստեմը նորմայի ներսում, յերբ, որինակ, ջուլհակը, ծրագիրն 80—90% կատարելով 10% պարգև է ստանում ամբողջ արտադրանքի համար, իսկ 90—100% կատարելու դեպքում— 15%: Նույնը և մանելու գործում: Այդ սիստեմն անհրաժեշտ է փոխել պրոդրեսիվ-պրեմիալ սիստեմի՝ նորման 100%-ից բարձր կատարելու համար:

Անհրաժեշտ է վերանայել և վարձատրման նորմաներ սահմանել խառնված աշխատանքի համար, մեծ քանակությամբ դազդյահների ու մեքենաների վրա աշխատելու համար:

Աշխատանքի բարձր արտադրողականության կապակցությամբ նշանակելի չափով աճեց մեր ստախանովականների աշխատավարձը: Վինագրադովան աշխատելով 36

դազդյահի վրա 248 ռուբլի աշխատավարձ եր ստանում, իսկ 216 դազդյահի վրա աշխատելով 950 ռուբլի յե ստանում. Իլարիոնովան 60 դազդյահի վրա աշխատելով 276 ռուբլի յեր ստանում, իսկ 210 դազդյահի վրա աշխատելով 872 ռուբլի յե ստանում: Ոդինցովան 36 դազդյահի վրա աշխատելով 216 ռուբլի յեր ստանում, իսկ 210 դազդյահի վրա աշխատելով 918 ռուբլի յե ստանում. Ֆաղեյեվան 8 դազդյահի վրա աշխատելով 258 ռուբլի յեր ստանում, իսկ 16 դազդյահի վրա աշխատելով 513 ռ. յե ստանում. Զեկունովան բրդեղենի արդյունաբերության մեջ յերկու դազդյահի վրա աշխատելով ստանում եր 191 ռուբլի, իսկ 6 դազդյահի վրա աշխատելով 368 ռուբլի յե ստանում: Սմետանինը մինչև վերջին ժամանակները ստանում եր 730 ռուբլի, այժմ ստանում է մինչև 1000 ռուբլի:

Անհրաժեշտ է հետագայում այնպիսի աշխատավարձ սահմանել, վորպեսզի ստախանովականորեն աշխատելու մեջ, ստա-

խանովյան շարժման զարգացմամբ շահագրգռվեն և ոժանդակ բանվորները, և վարպետներն ու յենթավարպետները, և ինժեներա-տեխնիկական անձնակազմը։ Պետք է արդյունաբերության բոլոր բանվորներին շահագրգռել սարքավորման արտադրողականության ու արագության բարձրացմամբ։ Անհրաժեշտ է վերանայել յենթավարպետների ու ինժեներա-տեխնիկական անձնակազմի աշխատավարձի սիստեմը՝ աշխատանքը վարձատրելու պրոգրեսիվ-պրեմիալ սիստեմ ստեղծելու ուղղությամբ՝ նրանց արտադրական նվաճումների համար։

ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆՈՐԵՆ ԱՇԽԱՏԵԼՈՎ ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԿԱՐՈՂԱՆԱ ԻՐԱԳՈՐԾԵԼ ԻՐ ԱՌԱՋ ԴՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ստախանովականները բոլոր նորմաները գերազանցեցին արդյունաբերության բոլոր ճյուղերում։ Ստախանովականները կերպարանափոխեցին նաև մեր ձեռնարկությունների հզորությունը։ Ստախանովականները նոր լրացուցիչ արտադրական հզորություններ են ստեղծում, լցնում են նեղ տեղերը, խնայում են սարքավորումը, խնայողություն են կատարում կապիտալ ծախսումների մեջ։

Մի քանի օրինակ։ «Սկորոխոդ» և «Պա-

րիժսկայա կոմունա» ֆաբրիկներում ձևոր-
ների ցեխը պլանը կատարում եր միայն
90%-ով և նրանք միշտ նեղ տեղ եյին ար-
տադրության մեջ: Այժմ նրանք պլանը կա-
տարում են 105–110 տոկոսով և այլևս
նեղ տեղ չեն հանդիսանում, իսկ նեղ տեղ
դարձել են կարող ցեխերը: Մենք, Դըժ-
բախտաբար, կոշկի արդյունաբերության
մեջ միասեղանի մեքենաներ ունենք,—յեթե
կոշիկը յերկու կարով է, ապա մեքենան մի
անգամ կարելով կրկին է վերադառնում
հաջորդ կարի համար: Այժմ մենք մտցնում
ենք յերկասեղանի և յեռասեղանի մեքենա-
ներ, վորոնք յերկու կամ յերեք կար են
անում և դրանով մեծ արտադրողականու-
թյուն է ստեղծվում:

Ստախանովյան շարժումը մեզ հնարա-
վորություն է տալիս կոշկի արդյունա-
բերության ասպարեզում հնգամյա պլանը
կատարել հին ձեռնարկություններում և
արդեն սկսվածների ավարտումով, հրա-
ժարվելով յերկրորդ հնգամյակում նախա-
դծված յուրաքանչյուրը 36 միլիոն ռուբլի

արժեքով 2 կոշկի ֆաբրիկների կառու-
ցումից, և դրանով իսկ խնայելով 72 մի-
լիոն ռուբլի:

Այդ վոչ միայն կոշկի արդյունաբերու-
թյան մեջ, նույնը կարելի յե ասել մյուս
ճյուղերի մի շարք ձեռնարկությունների
մասին:

Բամբակեղենի արդյունաբերության մեջ
և ընդհանրապես բամբակեղեն մանած
գործածող մեր ճյուղերում նեղ տեղ է
հանդիսանում մանելը: Իր ժամանակ մա-
նարանները կոմբինացված եյին ջուլհակա-
նոցների հետ: Այժմ մանածի նոր
սպառողներ են հանդես յեկել,— տրիկոտա-
ժի, բրդեղենի, արդյունաբերությունը,
տեխնիկական նյութերի, ձկնորսական ցան-
ցերի և այլն արդյունաբերությունը: Այժմ
մեզ մոտ պակասում է մանածը: Կարելի՞
յե լցնել այդ նեղ տեղը:

Ցես հանձնարարեցի մշակել, թե ի՞նչպես
կարելի յե վերացնել այդ նեղ տեղը: Վոր-
պես արդյունք այդ բանի ինձ հաղորդեցին,
վոր յեթե մանող ճախարակների արագու-

թյունը ավելացնենք 5%-ով, ապա հենց այս էլ արդյունաբերության տարբեր ճյուղերին անհրաժեշտ բավականին քանակությամբ լրացուցիչ մանած կտա: Իրականության մեջ մանող ճախարակների արագությունը կարելի է ավելացնել շատ ավելի մեծ տոկոսով: Ճախարակների արագությունն ավելացնելու և մանելու սարքավորման մեծ արտադրողականություն ստեղծելու համար անհրաժեշտ է նորոգել մանելու սարքավորման դետալների մի մասը, կարգին պահել սարքավորումը, կարգավորել համապատասխան տեխնոլոգիական պրոցեսը, և առանձնապես լավ կազմակերպել բամբակի մշակումը, նախապատրաստական ցեխերում կատարել եմուլսացումը, խոնավացումը, վորպեսզի թելը քիչ կտրատվի և վորպեսզի դրանով ապահովվի ճախարակների արագությունը:

Մի որինակ ևս: Կոնստանտինովկայի ՀՀՇ գործարանում աշխատում էր 6 գազոգեներատոր: 1935 թվին ձեռնամուխ եղան ևս 2 գեներատորի շինարարության: Այժմ աշխատում են 5 գեներատորով և դարը բավական է ու հրաժարվում են 8-րդ գեներատորի շինարարությունից, իսկ 6-րդը ու 7-րդը կլինեն պահեստի:

Սրանք են ստախանովյան շարժման առաջին արդյունքները սարքավորումն ոգտագործելու գործում: Իսկ վո՞րքան այդպիսի հնարավորություններ կան մեր արդյունաբերության բառացիորեն բոլոր ճյուղերում:

Ստախանովյան շարժումը հսկայական դեր է խաղում այդ լրացուցիչ ռեզերվներն ստանալու մեջ և նոր հզորություն է ստեղծում մեր ձեռնարկություններում:

Մեզ հարկավոր է ծանր արդյունաբերության նման, լավագույն ստախանովականների մասնակցությամբ տնտեսավարների ու ինժեներա-տեխնիկական աշխատողների հատուկ կոնֆերենցիաներում վերանայել տեխնիկական նորմաները, արտադրանքի նորմաները և արտադրական հզորությունները, վորպեսզի 1937 թվի պլանը կազմենք նոր, վերանայված նորմաների հիման վրա:

Թեթև արդյունաբերության մեջ ամենից առաջ վո՞ր մասում պետք է զարգանա ստախանովյան շարժումը:

Ամենից առաջ այնտեղ, որտեղ հումքի ռեսուրսներ կան: Այդ—հումքի նախնական մշակման մեր ճյուղերում, վուշի գծով, բամբակապտիչ գործարաններում, մետաքսագործարաններում կաշու փոխանցության ձեռնարկություններում, կոտոնինի արդյունաբերության մեջ և ոժանդակ նյութերի, դետալների ու մեքենաների արտադրության մեջ:

Տեքստիլ ճյուղերում,— առաջին հերթին վուշեղենի ու մետաքսեղենի արդյունաբերության մեջ և, առանձնապես, վուշ մանելու և մետաքս գործելու մեջ, բամբակեղենի, տրիկոտաժի և կանեփ-ջուտի արդյունաբերության մեջ, առաջին հերթին մանելու գործում և, մասնավորապես, սանրած և վոլորած մանած պատրաստելու մեջ:

Թեթև արդյունաբերության աշխատանքում, առանձնապես ստախանովյան շարժման զարգացման կապակցությամբ, պետք է, որպես ամենագլխավոր խնդիրներից մեկը, դրվի՝ հոդատար վերաբերմունք դեպի հումքը, հումքի ռացիոնալ, խնայողական ոգտագործումը, պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձվի բնական հումքի լավագույն փոխարինողների արտադրության կազմակերպմանն ու մեծացմանը, կաշու-կոշկեղենի արդյունաբերության համար, բրդեղենի արդյունաբերության դրությանը, և տեքստիլ արդյունաբերության տարբեր ճյուղերի համար կոտոնինի պատրաստմանը:

1936 թվին մենք կստանանք 33 միլիոն փթից ավելի բամբակ-բուսաթել—անցյալ տարվա 23 միլիոն փթից միքիչ ավելիի դիմաց: Մենք 30%-ով ավելացնում ենք մեր խորհրդային բրդի մթերումը, մենք բավականաչափ վուշ և մետաքսի բոժոժ կստանանք: Դա թեթև արդյունաբերության առաջ դնում է,—արտադրանքն այն-

քան ավելացնելու դեպքում, վորքան սըրված է մեզ 1936 թվի համար,— հումքի ճիշտ և լավագույն ոգտագործման և այն խնայողաբար ծախսելու խնդիրը:

Հումքի ծախսման խնայողություն կատարել բոլոր ճյուղերում և առանձնապես այնտեղ, վորտեղ նա ամենից ավելի դեֆիցիտային է,—կաշու-կոշկեղենի և բրդեղենի արդյունաբերության մեջ,—դա մարտական խնդիր է, վորը թեթև արդյունաբերությունը պետք է իրագործի:

Կադրերը վորոշում են ամեն ինչ մեր աշխատանքում, ինչպես և բոլոր մյուս աշխատանքներում, և առանձնապես տեխնիկային տիրապետած կադրերը: Անհրաժեշտ է թեթև արդյունաբերության մեջից վերացնել ինչ գնով էլ վոր լինի կոնսերվատիզմն ու թերադնահատումը ինժեներա-տեխնիկական աշխատանքի և ինժեներա-տեխնիկական կադրերի: Անհրաժեշտ է բարձրացնել ուսման մակարդակը, լայնորեն զարգացնել արտասահմանյան տեխնիկայի հետ ծանոթանալը, ավելի լավ դնել վորձի փոխանակումը լավագույն ձեռնարկությունների միջև: Այժմ ստախանովականներն ընդհանուր ձեռնամուխ են յեղել այդ գործին, նրանք ձիգ կտան տնտեսավարներին և ինժեներա-տեխնիկական աշխատողներին: Լայնորեն տարածվում է մամյանց մոտ գնալը՝ աշխատանքի ընթացքի հետ ծանոթանալու համար: Յերբ իվանովցիները և լենինգրադցիները Մոսկվա յին գալիս, ապա նրանք իրենց պարտքն են համարում գնալ «Ոկտյաբրսկայա ռևոլյուցիա» ֆաբրիկան, վորտեղ աշխատում է Իլարիոնովան, վորն աշխատում է բարձր արտադրողականությամբ:

Առանձնահատուկ կերպով պետք է դրվի ստախանովականներին ոգնություն ցույց տալու աշխատանքը: Անհրաժեշտ է նրանց հնարավորություն տալ լիովին հայտարարելու իրենց ընդունակությունները, իրենց յեռանդը, իրենց նախաձեռնությունը նրանց համար մասնագիտական ուսուցում կազմակերպելու, նրանց կուլտուր-կենցաղային

պայմանները բարելավելու միջոցով։ Այդ տեսակետից լավագույն ձեռնարկություններում աշխատանք կատարվում է։ Որինակ, ընկ. Սմետանինը սովորում է Լենինգրադի արդյունաբերական ակադեմիային կից հատուկ նշանակության ֆակուլտետում։ Ընկ. Ցաշինը—կաշվեղենի յերեկոյան տեխկումի ունկնդիր է, Վինոգրադովները սովորում են ֆաբրիկայի կից յեղած տեխնիկական դասընթացներում. տեխնիկական դասընթացներ են ստեղծված Կունցեվի ֆաբրիկային կից։ «Սերպ ի մոլոտ» ֆաբրիկայից ընկ. Ժուկովան սովորում է հատուկ դասատվի մոտ։ «Պրավդայի» մեջ հրապարակված է Պ. Ալեքսեյեվի անվան բրիգադենի ֆաբրիկայի 18 ինժեներների ու տեխնիկների նամակը, վորով նրանք հանձն են առնում սովորեցնելու 23 ստախանովականի։ Ստախանովականներին առաջին հերթին և բնակարան տրվում, իսկ մի շարք դեպքերում պարգևատրման կարգով կահույք է գնվում։ Այդ բանը կատարվում է Կունցեվկայի ֆաբրիկայում ընկ. Զեկունովայի

նկատմամբ, ընկ. Սմետանինի նկատմամբ— «Սկորոխոդ» ֆաբրիկայում, և Ժուկովայի նկատմամբ— «Սերպ ի մոլոտ» ֆաբրիկայում։

Հիմնական խնդիրներից մեկը, վոր թեթև արդյունաբերությունը պետք է դնի իրեն 1937 թվին, և վորի իրագործմանը նշանակելի չափով կարող է ոգնել ստախանովյան շարժումը— դա մեր արտադրանքի վորակի բարելավումն է։

Ստախանովյան շարժման և նյութական ու կուլտուրական միշտ աճող պահանջների դեմ հանդիման թեթև արդյունաբերությունը չի կարող այլևս մի քանի տեսակի արտադրանքները բաց թողնել այն վորակով, ինչ վորակով մինչ այժմ բաց էր թողնում։

Մենք բոլորս, թեթև արդյունաբերության աշխատողներս, պետք է անհամեմատ ավելի լավ աշխատենք, քան մինչև այժմ աշխատել ենք, տանք ավելի շատ և ավելի լավորակ արտադրանք, վորպեսզի բավարարենք բանվորական և կոլտնտեսային լայն մասսաների պահանջները։ Մեր արտադրան-

ջը և՛ վորակով դեռ բավարար չէ, և՛ քիչ է։ Մինչդեռ հաղուստը, կոշիկը նյութական և կուլտուր-կենցաղային պահանջների սպասարկման կարևորագույն տարրերից մեկն են։

Մենք, թեթև արդյունաբերության աշխատողներս, պետք է մշտական և սիստեմատիկ պայքար մղենք մեր արտադրանքի վորակը բարձրացնելու, մեր շինվածքները լավ ձևավորման, լավ ծաղկազարդման, գեղեցկության, նրբության համար։

Ստախանովյան շարժումը մեզ լիակատար հնարավորություն է տալիս աշխատանքը նոր սկզբների վրա վերակառուցելու համար, մենք ամեն բան ունենք,— սարքավորման լավագույն տեսակները յուրացվում են մեր մեքենաշինության կողմից, ներկա տարվա բերքի լավագույն հումքը և այլն, ամեն բան կա, վորպեսզի թեթև արդյունաբերությունն սկսի լավ աշխատել։

Թեթև արդյունաբերության աշխատողները պետք է բոլոր միջոցները ձեռք առնեն, վորպեսզի տատնապատկեն իրենց յեռանդը,

վորպեսզի պայքարեն ստախանովյան շարժման զարգացման համար, ստախանովականորեն աշխատելու համար։

Մեր Կենտրոնական Կոմիտեի և մեր սիրելի առաջնորդ ու ուսուցիչ ընկեր Ստալինի ղեկավարությամբ թեթև արդյունաբերությունը կկատարի իր առաջ դրված խնդիրները։ Թեթև արդյունաբերությունը 1936 թվին ավելի լավ, գեղեցիկ և ամուր գործվածք ու այլ շինվածքներ կտա, վորպեսզի մեր բանվորները, մեր կոլտնտեսականներն ե՛լ ավելի լավ, ե՛լ ավելի ուրախ ապրեն։ (Ծափահարություններ)։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Ստախանովյան շարժումը բաց արեց մեր հնարավորությունները 12

Նոր ձևով կազմակերպենք աշխատանքը ձեռնարկություններում 27

Ստախանովականորեն աշխատելով թեթև արդյունաբերությունը կկարողանա իրագործել իր առաջ դրված խնդիրները 47

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР А.
Մ. Հ. Ա. Մասիսյան
Ս. ՍՏԱՍՆԻԿՅԱՆԻ ՍՊ. Հ.

Թարգմ. Հ. Թուրշյան, խմբ. Տ. Խորունի,
սրբագրիչ Տ. Մուրադյան

Գլավլիտի լիազոր 1049, հրատ. № 353, պատվեր №49,
տիրաժ 5000, ինդեքս П—80։

Հանձնված է արտադրության 1/II 1936 թ.
ստորագրված է տպագրության 16/II 1936 թ.

Հայկուսհրատի տպարան, Երևան,
Ալլահվերդյան № 27

«Ազգային գրադարան»
NL0208525

31.130

ԳԻՆԸ 30 կ.

И. ЛЮБИМОВ

ВОПРОСЫ ЛЕГКОЙ ПРОМЫШЛЕННОСТИ В СВЯЗИ СО СТАХАНОВСКИМ ДВИЖЕНИЕМ